



«Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ն Հայաստանի Հանրապետությունում գործող համայնքային հասարակական կազմակերպություն է, որը հիմնադրվել է 2009 թթ ին Լոռու մարզի Թումանյանի տարածաշրջանի տարբեր համայնքներ ներկայացնող ոչ ֆորմալ քաղաքացիական խմբերի կողմից:

000 0000000000000000`

0000000000 00 0000000000 ` 000000 0000000000000 00000000000000

«Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի գործունեության առարկան է՝ Հայաստանի Հանրապետությունում աջակցել համայնքի ներգրավմանը , համայնքային խնդիրների հանդեպ համայնքի անդամների սեփականության գիտակցման խորացմանը, մասնակից դարձնել նրանց համայնքային զարգացման ծրագրերին, դրանց իրականացմանն ու մոնիտորինգին, համայնքի խնդիրների իրազեկության բարձրացման, կարողությունների զարգացման ու համայնքի համախմբման միջոցով:

Ապահովել համայնքներում ծառայություն մատուցողների պատասխանատվության , թափանցիկության բարձրացման գործընթացը, աջակցելով կոռուպցիայի դեմ պայքարին: Աջակցել համայնքներում ծառայություն մատուցողների և ՀՀ Քաղաքացիների կարողությունների զարգացմանը, ուշադրության կենտրոնում պահելով երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանությունը (կրթական, առողջապահական, մշակութային և այլն) , խրախուսելով երիտասարդների և երեխաների մասնակցությունն իրենց վերաբերող որոշումների ընդունման գործընթացին: «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ն իրականացնում է տեղական, մարզային , ազգային և միջազգային ծրագրեր, մարդու իրավունքների, համայնքային զարգացման, ՏԻՄ կարողությունների զարգացման, մշակույթի, ոչ ֆորմալ կրթության, միջմշակութային երկխոսության, երիտասարդության, կամավորականության , տնտեսական զարգացման և ենթակառուցվածքների վերականգնման ոլորտներում: «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ն համոզված է , որ քաղաքացիական հասարակության ձևավորումը Հայաստանում հնարավոր է միայն համայնքային մակարդակում քաղաքացիական արժեքների տարածման և քաղաքացիական գիտակցության բարձրացման արդյունքում: